

## ԱՐՄԵՆ ՌԱԿՈԲՅԱՆ

# ԹԱԹԱԽՈՍ ՀԱՅԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՄԾԱԿՈՒՅԹԻ ՇՈՒՐՋ

(18-րդ դ. - 20-րդ դ. սկիզբ)

Էթանիկ լեզուն, ինչպես հայտնի է, էթանիկ հճանության ձևավորման կարևորագույն միջոցն է: Այս իմաստով էթանիկ լեզվի վերաբերյալ ինքնապատկերացումները, որպես կանոն, պայմանվորում են որևէ խմբի էթանիկ հճանությունը: Հայտնի են, սակայն, խմբեր, որոնք, պատմական հանգամանքների բերումով նեթարկվելով ձուլման գործընթացների, կրելով մշակութային փոփոխություններ, կորցնելով մայրենի լեզուն, պահպանել են էթանիկ ինքնագիտակցությունը: Այդպիսի խմբերից են թաթախոս հայերը, որոնց պատմական աշխարհագրությունն ընդգրկում է Դերբենդից Ապշերոն ընկած տարածքը:

Խմբի ձևավորման, հճանության վերաբերյալ արտահայտվել են հակասական կարծիքներ, գործածվել իրարամերժ կամ խնդրահարցուց տերմիններ (թաթ քրիստոնյամեր կամ թաթ լուսավորչականներ, հայ-թաթեր, թաթ հայեր...): Պատմական, ազգարանական վերլուծությունը ցուց է տալիս, որ խումբը ձևավորվել է դեռևս 5-6-րդ դդ. արևելյան ու հսարևելյան Այսրկովկասում առկա հայկական է-նիկական հիմքի վրա, որը, շարունակականորեն գոյատևելով բազմադարյան իրանական ազդեցության գերակայության պայմաններում, բարդ էթնոդավանական ու աշխարհագրական միջավայրում, ենթարկվել է ձուլման գործընթացների, կորցրել մայրենի լեզուն, դարձել իրանալեզու, սակայն պահպանել է հայկական ինքնագիտակցությունը, դավանական պատկանելությունը և մշակութային շատ տարրեր<sup>1</sup>:

Ունգինում տեղի ունեցած քաղաքական, դավանական փոփոխություններն իրենց ազդեցությունն են թողել խմբի պատմական ուղղու և տարաբաշխվածության վրա: Փաստերը վկայում են միգրացիոն տարրեր տեղաշարժերի ու բռնի մահմետականացման մասին: Հայտնի է, որ թաթախոս հայերի գագալի մասը 18-րդ դ. վերջին (1796 թ.) Արևելյան Այսրկովկաս արշաված ռուսական զորքերի հետ միասին հեռանում է նախկին բնակության տարածքներից՝ Դերբենտ, Մուշկուր, Ղուբա, և հաստատվում հիմնականում Հյուսիսային Կովկասում՝ Ղզլարում և շրջակալքում, Ար. Խաչում, Եղեսիայում և այլուր:

19-20-րդ դ. սկզբին Այսրկովկասում թաթախոս հայերը մնացել էին հիմնականում Մադրասա, Քիլվար, Խաչմաս գյուղերում: Խաչմասը գոյատևեց մինչև 1918 թ., իսկ 1988-1990-ական թթ. Ադրբեյջանում սկսված հակահայկական հալածանքների հետևանքով բռնագաղթի ենթարկվեցին Այսրկովկասում մնացած այս խմբի բնկորմերը՝ Մադրասա և Քիլվար գյուղերի բնակիչները<sup>2</sup>:

<sup>1</sup> Հակոբյան Ա., Հայ-թաթերի ձևավորման միջավայրի և ձևավորման շուրջ, Երիտասարդ արևելագետների համբաւառական XXIII գիտական մասաշրջան, զեկուցումների թեզեր, Երևան, 2002, էջ 23-26:

<sup>2</sup> Հակոբյան Ա., Հայ-թաթերի տեղահանությունների և պատմական ճակատագրի որոշ դրվագներ մինչև 20-րդ դ. 80-ական թթ., Երիտասարդ գիտմականների հոդվածների ժողովածու (հումանիտար գիտ.), ԵՊՀ, 2000, № 1, էջ 12-15:

Ինչպես ցուց են տալիս փաստերը, 19-րդ դ. վերջին - 20-րդ դ. սկզբին խմբի մոտ որպես կենցաղային և հասարակական շիման լեզու տարածված էր թաթերենը:

Լեզվական մշակույթի խնդիրները, պահնքը՝ նրանց միջավայրում տարածված լեզու-աերը, երկևզվության, եռալեզվության (կամ բազմալեզվության) դրսնորումները, տարածված լեզուների (թաթերեն, թուրքերեն, հայերեն...) օգտագործման ոլորտները և այլն, ուշագրավ գյուղ են տալիս խմբի կողմնորոշումները հասկանալու համար:

Համարվում էր, որ թաթախոս հայերի մասին տեղեկություններն ի հայտ են գալիս 19-րդ դ. երկրորդ կեսից սկսած<sup>3</sup>, մինչդեռ 18-րդ դ. վերջին - 19-րդ դ. առաջին կեսին արդեն որոշակի հայտնի էր այս խմբի գոյության մասին:

Դեռևս 18-րդ դ. վերջին համեյապում է տեղեկություն խմբի թաթախոս լինելու մասին (տեղեկությունների տակ մակարի ունենք միայն ուղղակի փաստեր նրանց թաթախոս լինելու մասին, այլ ոչ՝ բնակավայրերի անվանումները, որոնք համեյապում են ավելի վաղ հիշատակություններում):

Ուշագրավ է 18-րդ դ. վերջի եվրոպացի ճամապարհորդ Յ. Պոտոցկու տեղեկությունը: 1797 թ. նա հայտնում է, որ Մուշկուրի հայերը խոսում են թաթերեն: Ինչպես նշում է հեղինակը, թաթերեն են խոսում նաև Ծիրվանի երկրագործ հրեաները, որոնք, սակայն, իրենց միջև մի այլ լեզու են գործածում: Հետաքրքրական է, որ Յ. Պոտոցկին իր տեղեկությունները, ինչպես ինքը է ասում, վերցրել է հայից, որի թեղադրությամբ ինքը կազմել է թաթերեն լեզվի բառարան<sup>4</sup>:

Այսրկովկասում ուսական տիրուվթներին նվիրված մի աշխատության մեջ անդրադարձ կա այն մասին, որ Ծիրվանում թաթարների և հայերի փոքր մասը խոսում է թաթարերենից և հայերենից տարբերվող յորահատուկ լեզվով, որը ըստ տեղացիների՝ «աղավաղված պարսկերեն» է<sup>5</sup>:

19-րդ դ. առաջին կեսին հրատարակված մեկ այլ աշխատության մեջ նույնպես տեղեկություն կա այն մասին, որ Ղուբայի հրեաները և հայերը խոսում են թաթերեն<sup>6</sup>:

Քանի որ հիշյալ շրջատարածքում «թաթարերեն» ծառայում էր որպես ազգամիջյան համորդակցության հիմնական լեզու, որպես այդպիսին այն պետք է դիտել նաև տվյալ պարագայում, և ակնհայտ է, որ վերը հիշատակված դեպքերում թաթերենը հայերի և հրեաների սեփական գործածության լեզուն էր:

19-րդ դ. երկրորդ կեսից սկսած հայ և օտար աղբյուրներում այս խմբի մասին տեղեկությունները համեմատաբար ավելի բազմազան ու հանգամանալից են դառնում:

Ուշագրավ տեղեկություններ են հայտնվում պարբերական մամուլում: Հայկական մամուլում այս խմբի մասին առաջին հիշատակությունը է համարվում «Արարատ» ամսագրում (1871 թ. մարտ) Դամիել արքեպոս. Ծահնազարյանի՝ Ծամախու թեմի նկարագրությանը նվիրված հոդվածաշարում Մադրասա գյուղի բնակիչների մասին տեղեկությունը<sup>7</sup>: Նա

<sup>3</sup> Ղալթակաչյան Ս., Երկևզվության հարցի շուրջ, Սովետական մանկավարժ, 1970, № 5, էջ 82:

<sup>4</sup> Potocki J., Voyage dans les steppes d' Astrakan et du Caucase, Paris, 1829, t. 1, p.104 -105.

<sup>5</sup> Обозрение российских владений Закавказом, т. 3, СПб, 1836, стр. 79.

<sup>6</sup> Некоторые замечания на книгу Обозрение российских владений Закавказом, СПб, 1840, стр. 83.

<sup>7</sup> Ղալթակաչյան Ս., Հայերենի տարրերը հայ-թաթերեն բարբառում, ՀՀԳ, 1970, № 3, էջ 72:

գրում է, որ «բնակիչք ընդհանրապէս խօսում են երկու լեզուաւ միմեանց Բետ Հայերէն և Թաթերէն»<sup>8</sup>:

Այդ նոյն տարրում տեղեկություն է տրվում նաև «Մեղու Հայատանի» լրագրում: Այն վերաբերում է Քիլվար, Խաչմաս, Ղարաջալու գյուղերին: Նշվում է, որ այդ գյուղերի բնակիչները հայերէն չգիտեն, այլ՝ «թաթարերէն (Պարսից աղասաղեալ լեզու) և թուրքերէն գիտեն» և որ իրար Բետ Թաթարերէն կը խօսին, իսկ մնացելոց Բետ թուրքերէն: Հետաքրքրական է, որ նշվում է նաև, թե այդ բնակչությունը գաղթել է Անիից<sup>9</sup>:

Հեղինակը մասնավորեցնում է, որ Բրանճ միայն մի երկու հայերէն բառ գիտեն՝ «քարի լոյս, բարի օր, բարի իրիկուն, օրինեան Տէր, ժամ, եկեղեցի, խաչ, տէրտէր, Աւետարան», և հաղորդում, որ «շատ անգամ պատահած է ինձ Բետ, որ կուգան համարձակ «քարի լոյս» կամ «քարի օր» կ'ասեն. բայց երբ «Աստծոյ քարին» ասելուց յետ կ'սկսեն մեր լեզուաւ խօսիլ Բետներում, նորա խսկոյն թուրքի լեզուաւ կ'լայտնեն թէ Հայերէն չգիտեն... Քահանա տեսնելիս «օրինեան Տէր» կը պոռան ու լեսոյ «քեֆն նեչայ դըր տէրտէր. բուրվառը կեօթըր, գեղախ ժամա, Աւետարան օխիաք» կ'ասեն»:

Կովկասագետն Ն. Զելյոնից Բաքվի Ամիանգի ազգագրությանը նվիրված իր աշխատության մեջ նոյնպես նշում է, որ Քիլվարի բնակիչները խոսում են միմյանց Բետ թաթերէն<sup>10</sup>:

Չնայած Ս. Ղալթախչյանը գրում է, որ Քիլվարի դպրոցը բացվել է 1893 թ.<sup>11</sup>, սակայն այն իրականում բացվել էր ավելի վաղ:

1875 թ. Գևորգ Դ Կաթողիկոսին է դիմում դուրայաբանակ Միրզաջան Հովհաննիսյանը: Նա, Ակարագրելով Քիլվար գյուղի անմիտար վիճակը, նշում է այնտեղ դպրոց բացելու անհրաժեշտության մասին և հայցում Վեհափառի օժանդակությունը: Նամակագիրը տեղեկացնում է, որ Ղուբայի հայկական այս միակ գյուղի 70 տուն բնակիչները հայերէն չգիտեն. «...բնակիչքն հայր են կոչում, բայց ո՛չ հայերէն խօսալն, ո՛չ կարդալն և ո՛չ ուսումն ասած բառն չեն իմանալ», այլ՝ «մէկ մէկու Բետ» խոսում են «հիմուց սովորած թաթի լեզուվ», և իմքը, լինելով Քիլվարում, ականատես է եղել «Արանց աղքատ և խեղճ ման-

<sup>8</sup> Դամիել արքեպոս. Օաթմազարյան, Ալցեռութիմ եկեղեցեաց գիտորէից վիճակին Հայոց Ծամախոյ, Արարտ, 1871, մարտ, էջ 352:

<sup>9</sup> Մեղու Հայատանի, 1871, Բոկտեմբեր 16, N 38 (Այս խմբի մասին աղբյուրներում Բիշատակվում է նաև «Թրքախոս» կամ «Թաթարախոս» տերմինը (Նկատի ունենք այն տեղեկությունները, որոնք վավերացնում են բացառապես այս խմբի «Թրքախոս» լինելը): Թեև նման Բիշատակությունները ներվում կամ ճշգրտվում են ավելի իրազեկ աղբյուրների միջոցով, այնուամենամեծիվ, մեր կարծիքով, նման Բիշատակությունները պայմանավորված են Բետնել հանգամանքներով. Առաջ Բետինակների անձանությունը լեզվակամ իրողություններին, որի արդյունքում Գրանց համար անձանոյ լեզուն դատման է «Թուրքերնեն»: Օրինակ՝ Վերը Օշված Բիշատակության մեջ «Պարսից աղասաղեալ լեզուն» նշվում է որպես «Թաթարերէն», մինչդեռ պիտի լիներ թաթերէն: Երկրորդ Բետինակները կամ Արանց ներկայությամբ ուրիշներն այս խմբի Բետ շվիլ են «Թուրքերնեն», և դա հիմք է տվել կարծելու, թե Արանց «Թրքախոս» են: Թեև նմարավոր է նաև թրքախոս տարրի առկալությունն այս խմբում, վերը նշված տեսամելումից, մեր կարծիքով, պետք է դիտարկել նմանատիպ փաստերը):

<sup>10</sup> Յանձնութեան Հ. Էթնոգրաֆիկական սպառապահության համար աղայի շուրջ, Սովորած ականավարժ, 1970, № 5, էջ 83:

<sup>11</sup> Ղալթախչյան Ս., Երկու լեզվության հարցի շուրջ, Սովորած ականավարժ, 1970, № 5, էջ 83:

կանց ուսման և լեզուի կարօս» դրությանը: Նկարագրելով Քիլվարը՝ հեղիճակը հաղորդում է, որ գյուղի եկեղեցին «Սբ. Գրիգորիսի ժամանակիցն է շինուած», իսկ Քիլվարը շրջապատված է «տաճկաց» գյուղերով, ուր կան հայկական գերեզմաններ, և այդ «գիտօրական էլ, որտեղ այժմ տաճիկներ են բնակում, հայոց գիտօրական է եղած հին տարինեռումն»<sup>12</sup>:

«Մեղու Հայաստանի» թերթի և արխիվային վավերագրերի վկայությամբ, 1875 թ. սեպտեմբերին Քիլվարում բացվում է ծխական հոգևոր դպրոց<sup>13</sup>: Նախաձեռնողները Միրզաշան Հովհաննիվանն ու Ղուբայի գործակալ Հովսեփ քահանա Աշուլյանն էին: Հենց սկզբից դպրոցին, նախաձեռնողների դիմումով, աշակցություն է ցուցաբերում Բաքվի Հայոց Մարդասիրական Ընկերությունը: Դպրոցի բացման կապակցությամբ գործակալ քահանայի՝ Շամախու թեմի կոնսիստորիային ուղղված զեկուցագիրը բավականին հետաքրքիր տեղեկություններ է պարունակում: Նկարագրվում է, որ Քիլվարի «զՀայս բոլորովին զուրկ ի հայկական բարբառոյ ինքնանք ի բարբառուական կենցաղս, և զմանկունս նրանց դատարկապորտ թափառուն շուկայս»: Նշվում է, որ աշակերտները 12 են, բայց «հետզհետէ յաւելու»: Հետաքրքրական է, որ հենց սկզբից ուսուցչին օգնական է նշանակվում զուրկ տիրացուն, որպեսզի «ուսուցչի զասացեալսն թաթական բարբառիք թարգմանիսց մինչև հայկական բարբառոյ յընտելաման նրանց»:

Շամախու թեմի կոնսիստորիան հանձնարարում է թեմական դպրոցների տեսչին Քիլվարի դպրոցի համար կազմակերպել հոգաբարձուների խորհրդությունը և դպրոցական գործն համաձայն ծխական դպրոցների կանոնադրության<sup>14</sup>: 1875 թ. հոկտեմբերին քիլվարցիներից հոգաբարձուների խորհրդությունը է ընտրվում դպրոցի տնտեսական և ուսումնական խընդիրները հոգալու համար<sup>15</sup>: 1875 թ. հոկտեմբերին Քիլվար այցելած թեմական տեսուչը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում: Նկարագրում է, որ «շրջապատեալ գիտօրէկիք տաճկաց, վարին ընդ միմիանս ի լեզու և ի տարազ կենցաղվարութեան տաճկաց»: Տեսուչը հայտնում է, որ «բացի և աստանոր զմի Հովսեփ ծխական դպրոց յեկամուտ նմին նշանակելով զհանգանակեալ ի ձեռն Աշուլյեանց Յովսեփ քահանայի և աւ. Միրզաշանի Յովհաննիսեանց զնուիրադրամն և զտարեկան հարիւր յիսուն րուբլի տուրս Մարդասիրական ընկերութեան Բագուալ»<sup>16</sup>: Ըստ էության տեսչի այցելության ժամանակ պաշտոնականցել է Քիլվարի դպրոցի գոյությունը, որն արդեն գործում էր:

Քիլվարցիների վերաբերմունքը դպրոցի նկատմամբ նախապես հակասական էր: Ինչպես տեղեկացնում է «Մեղու Հայաստանի» լրագիրը, «Սկզբում Քիլվարցիք և աւելի ծերութիք հակառակել են իրենց երեխայոց տալու կարծելով թէ դպրոցը բացում է նրա համար, որ իրանց որդիքն երբնիցէ «սպլատ» գման. բայց այժմ ընդհակառակը մեծ համակրութիւն են ցոյց տալիս և զմայլում են իրանց որդիցը այբբենարաններ ծեռներին տես-

<sup>12</sup> Հայաստանի Հանրապետության Պետական կենտրոնական պատմական արխիվ (ՀՀ ՊԿՊԱ) ֆ. 56, գ. 15, գ. 58, թ. 5-7:

<sup>13</sup> Մեղու Հայաստանի, 1876, № 32: ՀՀ ՊԿՊԱ ֆ. 56, գ. 15, գ. 21, թ. 13-14:

<sup>14</sup> ՀՀ ՊԿՊԱ ֆ. 56, գ. 15, գ. 21, թ. 13-14:

<sup>15</sup> ՀՀ ՊԿՊԱ ֆ. 56, գ. 15, գ. 21, թ. 15:

<sup>16</sup> ՀՀ ՊԿՊԱ ֆ. 56, գ. 15, գ. 21, թ. 24:

ներիս»: Հեղինակը նաև հաղորդում է. «...զմայլեցրեց այն որ հարսեր ու աղջկներ առանձին հաղորդում և երեկոները ձայն ձայնի տուած, կժեր ուսմերի վրայ դրած, միահին «Հայրենիք սրբազն», «ՅԱՃԱԳԵՇ՝ լերինք Աղարատեան» երգելով գնում էին չուր բերելու աղբիւր ները ... թէս երգերի մի բառ անգամ չէին հասկանում»<sup>17</sup>:

Դպրոցի բացումից ընդամենը մեկ տարի անց, ավարտական քննությունների ժամանակ, նշվում է, որ Աերկա գտնվող քիլվարդները հիացել էին, ծիծաղում էին, որ իրենք հայերեն չգիտեն, բայց իրենց երեխաները կարողանում են խոսել, կարդալ, գրել և «...այն մտքի չեն թէ՝ «Երեխայոցը սալտաթ տամելոյ համար են ուսուցանում»»<sup>18</sup>:

Քիլվարի դպրոցն այնքան էլ կանոնավոր չի գործել: Հստ տեղեկագրի, այն 1875-1885 թթ. և 1888-1889 թթ. աջակցություն էր ստանում Բաքվի Հայոց Մարդասիրական Ընկերությունից<sup>19</sup>: 1885-1888 թթ. դպրոցը չի գործում<sup>20</sup>: 1888 թ. «Մշակը» տեղեկացնում է Քիլվարում, Խաչմասում կանոնավոր դպրոց հիմնելու անհրաժեշտության մասին, որը, ինչպես նշվում է, կարող էր մայրենի լեզուն տարածել իր լեզուն կորցրած «թքախոս» ժողովրդի մեջ<sup>21</sup>:

Բաքվի Հայոց Մարդասիրական Ընկերության Անդամացուցիչը, որը 1889 թ. տեսչական այցով լինում է Քիլվարի, Խաչմասի դպրոցներում, Քիլվարի դպրոցի մասին հայտնում է, որ աշակերտները կարդացած (հայերեն - Ա. Հ.) թարգմանում էին թաթերեն և կրկին վերածում հայերենի: Աշակերտներից միայն երկուաը, որոնք սովորել էին ավելի քան 2 տարի, կարդում էին վարժ, պատմում կարդացածը, և ուսուցիչը ստիպված էր բացատրել ամեն մի բառ, նախադասություն՝ «տեղական պայմաններին համաձայն»: Տեսչական ստուգումը բացահայտում է, որ «Աշակերտների անկանօն յաճախելուց կամ միաժամանակ դպրոց չմտնելուց՝ ուսուցիչը ստիպուած է եղել ըստ չափ ու զարգացման բաժանել աշակերտաց չորս խմբերի»: Այդ ժամանակ թէ՝ Քիլվարի, թէ՝ Խաչմասի դպրոցները դեռևս պաշտոնապես բացված չէին համարվում<sup>22</sup>:

Մեկ այլ վավերագրի համաձայն՝ Խաչմաս, Քիլվար, Մելսարի գյուղերում «...չեր յաջողունը կանոնաւոր դպրոցներ բանալ...», և ենթադրվում է, որ Քիլվարի դպրոցը կրկին վերաբացվում է 1893 թ. «...յաջողունցաւ բանալ Քիլվարում կանոնաւոր դպրոց»<sup>23</sup>: Հստ էության դպրոցը կանոնավոր չի գործել նաև հետագայում. այսպես՝ 1909 թ. Շամախու թեմի տեղեկագրում չի նշվում Քիլվարում դպրոցի մասին<sup>24</sup>, 1913 թ. մեկ այլ տեղեկագրում նշվում է, որ Բայկական դպրոցը, 2 տարի գյուղուն ունենալուց հետո, փակվել է Այութավական պայմանների պատճառով, և այժմ բացվել է պետական դպրոց: Նշվում է նաև, որ նախատեսվում է Աղոյից դպրոց բացել 1914-1915 թթ.<sup>25</sup>:

<sup>17</sup> Մելու Հայաստանի, 1876, № 14:

<sup>18</sup> Մելու Հայաստանի, 1876, № 32:

<sup>19</sup> ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 27, գ. 1, գ. 35, թ. 201:

<sup>20</sup> Մոլբ, 1891, № 5, էջ 685:

<sup>21</sup> Մշակ, 1888, № 13:

<sup>22</sup> ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 27, գ. 1, գ. 35, թ. 160-161:

<sup>23</sup> ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 27, գ. 1, գ. 49, թ. 247, 252:

<sup>24</sup> ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 57, գ. 2, գ. 1835, թ. 13-14:

<sup>25</sup> ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 27, գ. 1, գ. 215, թ. 3-7, 24:

Ավելացնենք նաև, որ դպրոցը գուտառում էր Բաբկի Հայոց Մարդասիրական Ընկերության և քիլվարդիների տրամադրած միջոցներով:

Այնուամենայնիվ, չնայած ներդրած շաճքերին ու միջոցներին, հայոց լեզվի ու հայախոսության տարածումը Քիլվարդում սպասված արդյունքներ չեն տալիս:

Մակար եպս. Բարխուտարյանը, 19-րդ դ. վերջին այցելելով Քիլվար, գրում է, որ բնակիչները «...խօսում են ըստ ասութեան իրեանց Լինաց բարբառով ( թաթերեն - Ա. Հ.) և հայտնում, որ «ստիպուած էի տաճերեն լեզուաւ խօսել, որպէսզի հասկանային»<sup>26</sup>:

1912 թ. Քիլվար այցելած հայ հոգևորականը, թաթերեն չիմանալով, ևս քարոզել է «Թուրքերեն», որպէսզի հասկանալի լինի բնակիչներին<sup>27</sup>:

Վերը բերված փաստերի հիման վրա կարող ենք եզրակացնել, որ 19-րդ դ. վերջին - 20-րդ դ. սկզբին Քիլվարում հիմնականում տարածված էր թաթերեն-թուրքերեն<sup>28</sup> երկինք-վությունը: Թաթերենը գործածվում էր կենցաղում, ներգուղական միջավայրում, հնարավոր է, որ այն հայորդակցության լեզու էր նաև թաթախոս մլուս խմբերի ( թաթ մահմեդականներ, լեռնային հրեաներ, թաթախոս հայեր) հետ ևս, իսկ թուրքերենը գործածվում էր որպես ազգամիջյան հայորդակցության լեզու:

«Մեղոր Հայաստանի» լրագիրը 1871 թ. գրում է, որ շուշեցի Պողոս Ալեքսանդրացի աջակցությամբ Խաչմասի քահանան փորձում է հայոց լեզվի ուսուցման գործը կազմակերպել Խաչմասում: Նա հայտնում է, որ «...ուսուցանում է մինչև որ այս մասին Հոգևոր կառավարութենից տնօրինութիւն կը լինի»<sup>29</sup>:

1875 թ. Շամախու թեմի դպրոցների տեսուչը Խաչմաս այցելելով վավերացնում է: «զՀայազգի մամկունս նրանց ոչ միայն զուրկ իսպառ ի մտաւոր և ի բարոյական դաստիարակութեան՝ այլև ի մայրենի Հայկական բարբառոյ իրեանց»: Այդ նույն թվականին տեղի բնակչության հետ միասին նրանք բացում են ծխական դպրոց<sup>30</sup>:

Մենք այլ փաստաթղթում տեսուչը վկայում է, որ տեղի բնակչությունը «...ի գործ ածեն զտանկացն բարբառ և կեան ըստ տարագոյ կենցաղվարութեան նոցա...», և նրանցից շատերը չգիտեն և «զխաչակնել ի դեմս իրեանց»: Տեսուչը բացում է, «... անդամոր և զմի Հոգևոր ծխական դպրոց...»՝ շուշեցի Պ. Ալեքսանդրացի կտակած միջոցների և խաչմասիների նվիրատվությունների օգնությամբ<sup>31</sup>: 1885-1888 թթ. դպրոցը չի գործում<sup>32</sup>: Այն վերաբացվում է 1888 թ., թեև, ինչպես արդեն ասվեց, պաշտոնապես բացված չէր համարվում<sup>33</sup>: 1889 թ. Բաբկի Հայոց Մարդասիրական Ընկերության ներկայացուցիչը տեսչական այցով լինում է նաև Խաչմասի դպրոցում: Նրա այցելության ժամանակ աշակերտ-

<sup>26</sup> Մակար եպիսկոպոս Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Թիֆլիս, 1893, էջ 140-141:

<sup>27</sup> Մալլեր Բ., Տատի, их расселения и говоры, Баку, 1929, стр. 16.

<sup>28</sup> «Թուրքերեն» անվան տակ մկանի ումենք 19-րդ դ. հայերի կողմից ներկային Աղրքենքամի տարածքությամկով թուրքական էթնոցեղային կազմավորումների լեզվին տրվող անունը, որը հումանիշ է նույն խմբի համար ուսանենալու կիրավող թաթարերեն տերմինին, և այն այժմ կոչվում է աղորեցամերեն:

<sup>29</sup> Մեղոր Հայաստանի, 1871, № 38:

<sup>30</sup> ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 56, գ. 15, գ. 21, թ. 16:

<sup>31</sup> ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 56, գ. 15, գ. 21, թ. 23:

<sup>32</sup> Մուրճ, 1891, № 5,էջ 685:

<sup>33</sup> ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 27, գ. 1, գ. 35, թ. 161:

Անրի թիվը 7-ն էր, իսկ ձմուանը հասանում է 13: Վերջինս դժգոհում է ուսուցման կազմակերպումից՝ տեղեկացնելով, որ աշակերտներն իրենց մտքերը չեն կարողանում արտահայտել, դժվարությամբ էին պատմում, հարցերին պատասխանում և այլն: Այդ իսկ պատճառով՝ «...երեխալքը ուսանում են 2-3 տարի և խօսում են թաթերէն թէ՝ տանը և թէ՝ դպրոցում»<sup>34:</sup>

Մակար եպս. Բարխուդարյանը, 19-րդ դ. վերջին այցելելով Խաչմաս, գրում է, որ ուսումնարանը չի գործում: Նա հավաստում է նաև, որ «ուսմէրէն է խօսում ժողովուրդը». այդ իսկ պատճառով «մի քանի քարոզներ խօսեցի տաճկերէն լեզուաւ և միսիթարեցի»<sup>35:</sup>

19-րդ դ. վերջին Խաչմասում է լինում նաև Մեսրոպ արքեպս. Մերատյանցը և Ակարագրում «թաթախոս ժողովրդի անմիտթար վիճակը»<sup>36:</sup>

1913 թ. մի տեղեկության համաձայն՝ Խաչմասի բնակիչները հայերէն չգիտեն. «Խաչմասեցին չի հասկանում, չի գրում և չի կարդում հայ լեզուով» և որ «բոլորն ել խօսում են անմտիր թիւրքերէն»<sup>37:</sup>

Հաս ԷՌՈՅԵԱՆ 19-րդ դ. վերջին - 20-րդ դ. սկզբին Խաչմասում և տիրապետող էր թաթերէն-թուրքերէն երկեղավույտունը:

Ինչպես արդեն ասվեց, Դամիել արքեպս. Շահնազարյանը Շամախու թեմի Ակարագրությանը նվիրված հոդվածաշարում Մադրասա գյուղի բնակիչների մասին հայտնում է, որ մադրասացիները միմյանց հետ խոսում են «Հայերէն և Թաթերէն»<sup>38:</sup>

Ունեն 1870 թ. Մադրասա գյուղում բացվել եր եկեղեցական-ծխական արական մեկնայան մպրոց<sup>39:</sup> Մադրասա գյուղի 1875 թ. մի Ակարագրության մեջ ասվում է, որ «...բնակիչքը (փոքրից սկսած մինչև մեծը արական լինի թե հգական) թողած իրանց մայրենի Հայ լեզուն խօսում են՝ ինչպէս այստեղ ասում է ֆարսի: Հազորագիտ չէ այստեղ հայերէն բոլորովին խօսել չիմացող մինչև անգամ 60, 70, և 80 տարեկան ծերը»<sup>40:</sup>

Հետագայում Մադրասայի դպրոցը ընդարձակեց իր գործունեությունը (դարձավ երկդասայա, այնուհետև նաև միդասայա օրիորդաց և այլն)<sup>41:</sup>

Հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում «Մշակը». «Բնակիչները մայրենի լեզուվ չեն խօսում, այլ մի տեսակ «թիւրք-պարսի» անուանեալ բարբառով: ... Կան այնպիսի ծերացած և միանգամայն զառամատալ մարդիկ, որոնք մի ամենահասարակ խօսք անգամ չեն կարող արտայայտել հայերէն լեզուով: ... Կան և այնպիսի անձիքն, որոնք իրանց անձնական գործերի և հաշիվների պատճառով առիթ են ունեցել յաճախ գտնուել զանազան հայաբնակ գիտերում և քաղաքաներում, որով նրանք բաւականին լաւ տեղեակ են հա-

<sup>34</sup> ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 27, գ. 1, գ. 35, թ. 161:

<sup>35</sup> Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուամից երկիր և դրացիք. Թիֆլիս, 1893, էջ 133:

<sup>36</sup> Մեսրոպ արքեպս. Մերատեանց, Նկարագիր Սուլը Ստեղիաննուի վանաց Սաղիամի եւ միա վանօրէից եւ ուստատեաց են և քաղաքացն եւ գիտօրէից որք ի Շամախու թեմի, Տիֆլիս, 1896, էջ 543-546:

<sup>37</sup> ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 227, գ. 1, գ. 214, թ. 9:

<sup>38</sup> Դամիել արքեպս. Շահնազարեան, Այցելութիւն եկեղեցեաց գիտօրէից վիճակին Հայոց Շամախու, Արարատ, 1871, մարտ, էջ 352:

<sup>39</sup> Կարապետյան Ա., Մատրասա գյուղը և նրա հուշարձանները, ՊԲՀ, 1989, № 2, էջ 232:

<sup>40</sup> Մշակ, 1875, № 28:

<sup>41</sup> Կարապետյան Ա., Մատրասա գյուղը և նրա հուշարձանները, ՊԲՀ, 1989, № 2, էջ 232:

յոց լեզուին, սակայն նրանք ևս իրանց գիշում եղած ժամանակ չեն կամենում գործածել իրանց հարազատ մայրենի լեզում՝ կարծես իրանց արժանապատութիւնից ցածր համարելով։ Նշվում է նաև, որ քահանաները հայերեն չեն խոսում անգամ եկեղեցում, երեխաները, որոնք գալիս են դպրոց, սկզբում «ամենահասարակ խօսքը անգամ չեն հասկանում հայերէն», իսկ հիմա կարդում և պատմում են<sup>42</sup>։

Այդ տարիների մեկ այլ մկարագրությունից տեղեկանում ենք, որ Մադրասայի բնակչությունը «երկու քառ անգամ չէ կարող արտայայտել իր մայրենի բարբառով (հայերէն)» և նրանց «թուրքերէնի և պարսկերէնի խառնուրդ» լեզուն ոչ ոք չի հասկանում։ Քիլվարցիների մասին տեղեկություն է պահպանվել, որ նրանք այլ վայրերի հայ բնակիչների հետ խոսում են թուրքերէն, սակայն այս սովորությունն այստեղ «ընդհանրացած չէ», և «Մատրասայի ժողովուրդը այդ շնորհիք էլ գրկած»՝ իրենց լեզվից բացի այլ լեզու չգիտեն՝ սակավ բացառությամբ։

Հնարավոր է, որ մադրասացիների մոտ թուրքերէնն այդքան լայն տարածում չունեար, ինչպես՝ քիլվարցիների, խաչմասցիների մոտ, սակայն այդ ժամանակշրջանում այն ազգամիջյան հաղորդակցության լեզու էր, և բնակչության ակտիվ հատվածը հավանաբար այն պիտի իմանար։ Նկարագրության մեջ նաև տարակուսանք է արտահայտվում, որ թեև Մադրասան շրջապատված է հայկական գյուղերով, մոտ է Ծամախի քաղաքին, սակայն նրանց մոտ հայոց լեզուն տարածված չէ։ Հեղինակը զարմանում է, որ «չեն ձգուում ընտեղանալ իրենց հարազատ հայերէն լեզուին», և անգամ քահանաները եկեղեցում հայոց լեզու չեն օգտագործում։

«Ես ինքու շատ անգամ ականատես եմ եղած,- նշում է նա,- որ մի որևէ մատրասեցի, որը երկար տարիներ ապրած լինելով հետաւոր երկիրներում, և հետևաբար բաւականին լաւ վարժուած լինելով հայերէն լեզուի մէջ, իր հայրենի գիշը վերադառնալուց յետոյ, երբ ճանապարհին պատահելով իր համագիտացի եղբօրը, ողջունել է նրան «քարիազողում» կամ «քարեւ ձեզ» բառերով, վերջինս փոխանակ նրան փոխադարձարար ողջունելու, սկսել է ծաղրել հետևեալ խօսքերով՝ «Հայ ի նա դանիշ, փիեար խշտանայ զըհունրա հեշտայ, շիարչի կեալաչի մատան».- «Դեռ սրան նայեցէք, իրա հայրական լեզուն թողած, քաղաքացու պէս (կամի ասել հայերէն) է խօսում»։ Հոյս է հայտնվում նաև, որ դպրոցը կօգնի հայոց լեզվի տարածմանը<sup>43</sup>։

20-րդ դարասկզբի մի մկարագրության մեջ հաղորդվում է, որ մադրասացիները դեռևս խոսում են «ֆարսերէնախանուն թաթի լեզուով», իսկ օտար գյուղացիների հետ՝ «մաքուր և բաւական կոկ հայերէն են խօսում, իսկ միմեանց հետ թաթերէն»։ Նշվում է նաև, որ նորեկ աշակերտները «կարգին հայերէն չեն հասկանում»։ Կան նաև մի քանի ընտանիքներ, որուելու թաթերէն չեն գործածում<sup>44</sup>։

Հայ-թաթերէն բարբառն ուսումնասիրող Ս. Ղալթախչյանը, 1950-ական թթ. այցելելով Մադրասա, գրում է. «...բնակիչները պատմում են, թե ինչպես տասնյակ տարիներ առաջ իրենք դժվարացել են հայերէն արտահայտվել, որ նույնիսկ եղել են մարդիկ, որոնք հայ-

<sup>42</sup> Մշակ, 1878, № 67:

<sup>43</sup> Մշակ, 1880, № 196:

<sup>44</sup> Մշակ, 1905, № 19:

ուն բոլորովին չեն կարողացել խոսել, և եթե ամերածնշտություն է եղել բացատրվել հարևան գյուղերի հայ բնակիչների մետք, դիմել են ադրբեջաներեներին, իսկ երբ հայը ադրբեջաներեն չի խացել, այդ դեպքում ստիպված են եղել բացատրվել ձեռքերի շարժումներով և միմիկայով: Գյուղի ծեր մարդիկ ասում են, որ իրենց պապերն առնասարակ հայերն չեն չխոսում, բայց հաճախում են հայկական եկեղեցի և պաշտում են Գրիգոր Լուսավորչի կրոնը»<sup>45</sup>:

Մեր կողմից գրառված որոշ դաշտային նյութեր ցուց են տալիս, որ մինչև 1940-50-ական թթ. «փարու» լեզուն բավական տարածված է եղել գյուղում: Բանասացները, որոնք ավագ ու միջին սերնդից են, հայտնում են, որ իրենց ծնողները խոսում են հայ «փարսերեն», և իրենք լսելով են առվորել: Այսօրվա բանասացները հիշում են, որ իրենց մեծերի մեջ կային մարդիկ, որոնք ընդհանրապես հայերն չգիտեին:

Վերը նշված տեղեկությունները որոշ ճշգրտումներ ու լրացրումներ են մտցնում մադրասացիների լեզվական մշակույթի վերաբերյալ աղբյուրներում տեղ գտած որոշ Ակադրագրություններում: Ըստ էռույան 19-րդ դ. վերջին - 20-րդ դ. սկզբին Մադրասայում տիրապեսոր է եղել թաթերեն լեզուն:

Ինչպես ցուց են տալիս աղբյուրները, 19-րդ դ. վերջին - 20-րդ դ. սկզբին Քիլվարում, Խաչմատում, Մադրասայում թե՛ ընտանեկան կենցաղում, թե՛ Անդրգյուղական միջավայրում տարածված է եղել և գործածվել թաթերեն լեզուն: Հնարավոր է, որ այն հաղորդակցության լեզու էր նաև իրար միջն և թաթախոս մյուս խմբերի՝ թաթ մահմետականների և լեռնային հրեաների մետք:

Այդ շրջատարածքում թուրքերենը ազգամիջյան հաղորդակցության լեզու էր և նույն կիրառումը ուներ նաև թաթախոս հայերի պարագայում: Այն որպես այդպիսին ծառայում էր նաև հայ բնակչության մետք հաղորդակցվելիս. այս հանգամանքը հատկապես բնորոշ է քիլվարցիներին, խաչմասցիներին, հայերն չիմացող մադրասացիները ևս դիմում էին այդ լեզվին:

Հնայած ընդհանրություններից՝ Քիլվարում, Խաչմատում, Մադրասայում լեզվական մշակույթի դրսուրումները որոշ առանձնահատկություններ ունեն: Թենի այդ գյուղերում բացվեցին ծխական հայկական դպրոցներ, այնուամենայնիվ դրանց դերը, ազդեցությունը հայոց լեզվի տարածման գործում հական չէր, և քիլվարցիները, խաչմասցիները 19-րդ դ. վերջին - 20-րդ դ. սկզբին հայերն գրեթե չգիտեին (կարող ենք ասել, որ նույնիսկ չեն հասկանում): Դա պայմանավորված էր, ըստ երևույթին, հետևյալ հանգամանքներով. նախ Քիլվարը, Խաչմատ գտնվում էին հայկական միջավայրից մեկուսացված պայմաններում և շրջապատված թաթախոս, թթախոս բնակչությամբ, երկրորդ՝ դպրոց հաճախող երեխաններն իրենց ընտանիքներում, միջավայրում լսում էին թաթերեն լեզուն, և դա ինքնին բերում էր ուսուցանվող լեզվի պասիվացմանը կամ անարդյունավետ էր դարձնում այն: Միջավայրի առանձնահատկություններով պայմանավորված ուսուցման բարդությունները ևս նպաստում էին լեզվի յուրացման դժվարություններին:

<sup>45</sup> Պալքանչյան Ս., Համառոտակի Մադրասայի հայ-թաթերենի մասին, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր (հաս. գիտ.), 1957, № 4, էջ 86:

Այս խնդիրը ժամանակին հայտնի էր: Օրինակ՝ եղեսիացի ուսուցիչ Արտ. Ստամբուլցյանը 20-րդ դ. սկզբին «Մշակի» էջերում հանդես գպով «Օտարախօս հայ ծխական դպրոցները» հոդվածաշարով, գրում է, որ նման խմբերում (որպես օրինակ բերվում են չերքեզահայերը, եղեսիացիները և այլն) գործող դպրոցների արդյունավետ գործունեության համար պահանջվում են այլ կազմակերպական, մանկավարժական հնարավորություններ ու պայմաններ՝ հաշվի առնելով լուրահատուկ միջավայրը<sup>46</sup>:

Չնայած վերոիշշալ հանգամանքները վերաբերում են նաև Մադրասային, այնուամենայնիվ այստեղ դեռ էին խաղում նաև այլ գործունենք. նախ այն շրջապատված էր հայկական բնակավայրերով, երկրորդ՝ բնակչությունը կամ զրա մի հատվածը համեմատաբար շարժունակ էր. նրանց մի մասը արթեատավորներ էին, զբաղվում էին առևտորվ և այլն: Այս հանգամանքը նպաստում էր ինչպես թուրքերենի տարածմանը, այնպես էլ ակտիվ հայերենին: Այս հանգամանքները որոշ չափով նպաստում էին հայոց լեզվի որոշակի գործառույթների կիրառմանը, մասնավորապես հարևան հայկական բնակչության հետ շփվելիս որպես հաղորդակցության միջոց ծառայելու: Եվ, ինչպես նշվում է աղբյուրներում, մադրասացիներն այլ վայրերի հայ բնակչության հետ շփվելիս գործածում էին հայերեն, իսկ չիմացողները՝ թուրքերեն: Կարծում ենք, հայերենի որոշակի իմացություն նախ և առաջ հենց շարժունակ շերտի մոտ պետք է դիտել:

Անդրադարձուկ 19-րդ դ. վերջին հիմնված Մադրասայի հայկական դպրոցին՝ Ս. Ղալթախչյանը հայտնում է նրա մեծ ազդեցության մասին<sup>47</sup>: Դպրոցի դերն ու ազդեցությունը, կարծում ենք, պետք է դիտարկել վերը նշված պայմանների համատեքստում ու 19-րդ դ. վերջին - 20-րդ դ. սկզբին տեղեկություններն այն մասին, որ մադրասացիներն իրենց կենցաղում, միջավայրում գործածում են հիմնականում թաթերեն լեզուն, վկայում են, որ դպրոցի մեծ ազդեցության մասին կարծիքը չափազանցված է:

Թաթախոս հայերի լեզվամշակութային հետաքրքիր դրսուրումներից է «փարսերեն» գործական աղոթքը, որը Ծամախու թեմի Ըկարագրությանը նվիրված իր աշխատության մեջ ներկայացնում է Մեսրոպ արքեպոս. Սմբատյանցը<sup>48</sup>: Բացի այդ, ուշագրավ է, որ 1717-1720 թթ. Ծամախու գրիչ և թագմանիչ Հարիմ Յաղուա Բարբիջանի կողմից հայտառ պարսկերեն «Աւետարան» է գրվում, որն այժմ պահպում է Մատենադարանում<sup>49</sup>: Կարծում ենք, որ այն թերևս ուղղված էր և կոչված ծառայելու նաև թաթախոս հայերի հոգևոր պահանջմունքների բավարարմանը:

Աղբյուրները հետաքրքիր տեղեկություններ են պարունակում նաև Հյուսիսային Կովկասում հաստատված թաթախոս հայերի մասին:

<sup>46</sup> Ստամբուլցեան Արտ., Օտարախօս հայ ծխական դպրոցները, Մշակ, 1910, № 64 -67, 171:

<sup>47</sup> Ղալթախչյան Ս., Համառոտակի Մադրասայի հայ-թաթերենի մասին., ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր (հայ. գիտ.), 1957, № 4, էջ 87:

<sup>48</sup> Սմբատեանց Մ., Նկարագիր Սուլը Ստեփանոսի վամաց Սաղիանի և միա վաճորէից և ուխտատեղաց են և քաղաքացն և գիտորէից որք ի Ծամախու թեմի, Տփիսի 1896, էջ 547:

<sup>49</sup> Կարապետյան Ս., Բուն Աղվանքի հայկական վիմագրերը, Երևան, 1997, էջ 57: Ցուցակ ձեռագրաց, Երևան, 1970, հոդ. Բ, ձեռ. № 8492:

Ազգագրագետ Ն. Վոլկովան իր Հյուսիսային Կովկասում հայերի տարածմանը և տարաբախչվածությամբ նվիրված հոդվածում, անդրադառնալով նրանց լեզվական խնդիրներին (երկլեզվություն և այլն), չի նկատել 18-րդ դ. վերջից Հյուսիսային Կովկասում հաստատված այս խմբի լեզվական մշակույթի դրսողությունը<sup>50</sup>, մինչդեռ այս խումբը Հյուսիսային-արևելյան Ալյորկովկասից իր հետ բերեց և 19-րդ դ. վերջին - 20-րդ դ. սկզբին շարունակում էր կրել իր հճանատի լեզվական մշակույթը:

Ս. Զալալյանցը, 19-րդ դ. կեսերին այցելելով Սք. Խաչ (Մաճառ), նշում է, որ 600 տուն՝ «գաղթեալք ի Դարրան» և «չգիտեն խօսի զհայերէն»: Նրա շաճքերով ակավում է հայերն այս ուսուցումը<sup>51</sup>: Տեղեկությունները վկայում են, որ Սք. Խաչում 1872 թ. բացվում է արական դպրոց, իսկ 1892 թ.՝ իգական<sup>52</sup>:

19-րդ դ. վերջին «Նոր-դարս» գրում է, որ Սք. Խաչում կան ընտանիքներ, որտեղ դեռևս գործածական է թաթերեն լեզուն: «...Թէպէտու մեծամասնութիւնը բարբառում է մայրենի լեզուվ, բայց մի քանի ընտանիքներում դեռևս գործածական է թաթի լեզուն, որը խառնուրդ է պարսկերէնի և հրէական բարբառի»<sup>53</sup>:

Առավել հաճգամանալի տեղեկություններ է պարունակում Աստրախանի թեմի առաջնորդի զեկուցագիրը՝ «Պղղված Ամենայն Հայոց Կաթողիկոսին (1912 թ.): Նշվում է, որ Սք. Խաչ քաղաքում «...748 տուն հայ կայ, որոնք համարեան բոլորն եւ գիտեն հայերէն, թեև ազատ խօսում են նաև թաթերէն և թրքերէն: Սրանք գաղթել են Ղուրայի զաւառից»<sup>54</sup>: Փաստերը, ըստ Էռլյան, ցուց են տալիս Սք. Խաչում հաստատված թաթախոս հայերի շրջանում եռավելագության դրսուրումների առկայության մասին:

Հյուսիսային Կովկասում թաթախոս հայերի խոշոր բնակավայր էր նաև Եղեսիա ավանը: Ս. Զալալյանցի այցելության ժամանակ (19-րդ դ. կեսեր) Եղեսիան ուներ 300 տուն բնակիչ (Ս. Զալալյանցը հիշատակում է բնակավայրի 3 անվանումները՝ «Կոսայամ, Ղօրա, Նոր Եղեսիա»): Ինչպես նշում է Ս. Զալալյանցը, «Չիք ուսումնարան աստ և չգիտեն խօսի հայերէն, ստորական բարբառ նոցա է պարսկերէն, զոր ուսեալ են ի Դարրան» և ունեն մի եկեղեցի<sup>55</sup>: 1866 թ. «Ժողովրդեան նուիրասուութեամբ» Եղեսիայում բնակավան ծխական դպրոց բացվեց<sup>56</sup>: «Արարատ» ամսագիրը 19-րդ դ. վերջին գրում է, որ Եղեսիայի բնակչությունը, որ գաղթել է Ղուրայի ու Դերբենտի համանգներից, «...կէս մասը միայն կարողանում է պարզ հայերէն խօսել, իսկ մնացեալը չգիտէ»: Նշվում է, որ հայերն չի մացողական բարբառ համարյա բոլորը տարիքով մարդիկ են և կամալք, իսկ երիտասարդներից շատերը խոսում են պարզ հայերէն: Բացված դպրոցը, որտեղ ուսանում են 50 աշակերտ, փոքր է և չի բավարարում պահանջներին, քանի որ 500 տուն ունեցող Եղեսիան ամենաքիչը 100-

<sup>50</sup> Волкова Н., О расселении армян на Северном Кавказе до начала XX в., Պատմա-քանասիրական համենս, 1966, № 3. стр. 257-270.

<sup>51</sup> Սարգսի արքեպոս. Զալալեանց, Ծանապարբորություն ի մեծն Հայաստան, Բու. 2, Թիֆլիս, 1858, էջ 451-452:

<sup>52</sup> ՀՀ ՊԿՊԱ. Փ. 52, ց. 2, գ. 678, թ. 8-9:

<sup>53</sup> Նոր-դար, օրաթերթ, 1884, № 172:

<sup>54</sup> ՀՀ ՊԿՊԱ. Փ. 57, ց. 2, գ. 1905, թ. 15-16:

<sup>55</sup> Սարգսի արքեպոս. Զալալեանց, Ծանապարբորություն ի մեծն Հայաստան, Թիֆլիս, 1858, Բու. 2, էջ 450:

<sup>56</sup> Նոր-դար, օրաթերթ, 1884, № 45:

150 աշակերտ կարող է տրամադրել, մինչեւ ուսանելու ցանկություն ունեցող եղեսիացիների մեծ մասը դուրս է մնում դպրոցից: Այդ տարիներին նախաձեռնվում է նոր դպրոցի կառուցման աշխատանքները<sup>57</sup>:

19-րդ դ. Վերջին «Նոր-Ռարը» գրում է, որ եղեսիացիները «...խօսում են պարսկերէն, թաթերէն և կես մասն էլ համարեա հայերէն»<sup>58</sup>:

Ըստ մեկ այլ տեղեկությամ՝ «...բնակիչների 1/3 մասից աւելի (գիշատրապէս կանանց դասակարգից) հայերէն իմացողներ թեև կան, սակայն խօսողներ շատ քիչ, բացի մի 3-4 տնից, բարբառը թուրքերէն է:

Պատահմամբ տեսանում եմ երկու հայերէն իմացողներ թուրքերէն խօսելիս, հարցնում եմ ինձ լայտնի է, որ դուք երկուսդ էլ հայերէն գիտէք, ի՞նչն է պատճառը, որ թուրքերէն եք խօսում: Պատահմանում են -«Մեր պապերից մնացած լեզուն ամօթ չէ» մոռանալ, կամ լսողը ի՞նչ կասի, թէ «տեսէք, տեսէք, հպարտացել են, կարծես մի երևելի մարդիկ են կամ ուսումնարանի մուօթ են, հայերէն են խօսում»<sup>59</sup>:

Այդ տարիների այլ տեղեկություններ վկայում են, որ եղեսիացիները «...խօսում են պարսկերէն լեզուով, բայց շնորհի ուսումնարանի այժմ նոր երիտասարդութիւնը համարեա բոլորն էլ խօսում են պարզ հայերէն»<sup>60</sup>: Ըստ մեկ այլ հաղորդման՝ «Եղիսացիք, առհասարակ, խօսում են ֆարսերէն, մինչն իսկ՝ նրանց երեք քահանաները իրենց ժողովրդի հետ նույն լեզուով են խօսում»<sup>61</sup>:

Աստրախանի թեմի առաջնորդի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին 1912 թ. ուղղված զեկուցագրում նկարագրվում է, որ Եղեսիայի ժողովուրդը, որ գաղթել է Ղուբայից, «թաթախոս» և մասամբ «թրքախոս» է: Եղեսիայում կան օրիորդաց և արական ծխական դպրոցներ, որոնք ուշադրության կարիք ունեն»<sup>62</sup>:

Եղեսիան այժմ էլ թաթախոս հայերի խոշոր բնակավայր է, որտեղ դեռևս ( 1980-ական թթ.) շատ ընտանիքներում խոսում են «պարսկերէն ենթաքարբառով»<sup>63</sup>:

18-րդ դ. Վերջին թաթախոս հայերի այլ հատվածների հետ միասին Հյուսիսային Կովկասում հաստատվեցին նաև Մուշկուրի Ղարաջալու գյուղի բնակիչները: Նրանք Ղզլարի մերձակալքում Ղարաջալու անունով գյուղ հիմնեցին: Հետագայում նրանց մի մասը հաստատվեց Սք. Խաչում: Ղզլարի մերձակալքում հիմնված Ղարաջալուում դեռևս 1885 թ. նախատեսվում էր ծխական դպրոց բացել<sup>64</sup>: Մի քանի տարի անց կարծիք է հայտնվում, որ եթե հնարավոր չէ կանոնավոր դպրոց բացել, գոնե միջոց գտնվեր, որ տեղական քահանան ուսուցաներ երեխաներին<sup>65</sup>:

<sup>57</sup> Արարատ, 1884., թիվ ԺԲ, էջ 563-564:

<sup>58</sup> Նոր-դար, օրաթերթ, 1890, № 110:

<sup>59</sup> Նոր-դար, օրաթերթ, 1891, № 69:

<sup>60</sup> Մշակ, 1896, № 119:

<sup>61</sup> Նոր-դար, օրաթերթ, 1899, № 166:

<sup>62</sup> ՀՀ ՊԿԱ. ֆ. 57, գ. 2, գ. 1905, թ. 9:

<sup>63</sup> Դիվան հայ վիմագրության, պրակ VIII, Ռուսաստանի դաշնություն, կազմեց՝ Գ. Գրիգորյան, Երևան, 1999, էջ 161:

<sup>64</sup> Մոտու Հայաստանի, 1884, № 89:

<sup>65</sup> Նոր-դար, օրաթերթ, 1888, № 66:

Բ. Միլերը հայտնում է, որ ղարաջաղիներն իրենց թաթերեն լեզուն կորցրել էին և ամցել թուրքերենին դեռևս իրենց հայրենիքում եղած ժամանակ<sup>66</sup>: Փաստերը, սակայն, ցուց են տալիս, որ Բ. Միլերի այս տեղեկությունը հավասարի չէ: 19-րդ դ. Վերջին, ինչպես արդեն ասվեց, «Մեղու Հայաստանը» գրում է, որ Ղարաջաղուի (Մուշկուր - Ա. Հ.) բնակիչները (4 ընտանիքներ), քիլվարցիները, խաչմասցիները հայերեն չգիտեն, այլ՝ «թաթարերեն (Պարսից աղասահեալ լեզու) և թուրքերեն գիտեն»: Լրագիրը տեղեկացնում է, որ իրար մետք «թաթարերէն կը խօսին, իսկ մնացելոց ժամ թուրքերէն»<sup>67</sup>:

1912 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղված Աստրախանի թեմի առաջնորդի գեկուցագրում Ղարաջաղուն (Ղզլարի մերձակայքում) հիշատակվում է որպես «թաթախոս հայ գիտ»: Հաղորդվում է, որ թեև ունեցել է ծխական դպրոց, սակայն վերջին տարիներին փակված է եղել և միայն 1910 թ. է վերաբացվել: Նշվում է, որ հաշվի առնելով այս «թաթախոս գիտ» համար դպրոցի առանձնահատուկ կարևորությունը, անհրաժեշտ է ապահովել ճրա գոյությունը<sup>68</sup>: Թերևս չի բացառվում, որ այստեղ էլ, ինչպես Եղեսիայում, Սր. Խաչում, թուրքերենը նույնպես տարածված լիներ, այնուամենայնիվ 19-րդ դ. Վերջին - 20-րդ դ. սկզբին, ինչպես ցուց են տալիս աղբյուրները, թաթախոս հայերի այս հատվածի մոտ տարածված էր և գործածվում էր թաթերեն լեզուն:

Այսպիսով, 19-րդ դ. Վերջին - 20-րդ դ. սկզբին, գտնվելով տարբեր եթենիկ, մշակութային միջավայրերում (Այսրկովկաս, Հյուսիսային Կովկաս), մասմակի տարբերություններ ունենալով համեմունք, թաթախոս հայերը հանդես էին գալիս ինքնատիպ լեզվամշակութային նկարագրով, որն իր մեջ մերառում էր երկլեզվության, բազմալեզվության տարբեր դրսերումներ, և չնայած դժվարություններին՝ բացված հայկական դպրոցները առաջին քայլերն էին կատարում լեզվամշակութային փոփոխություններ կրած հայ ժողովրդի այս հատվածի մոտ մայրենի լեզուն վերահաստատելու ուղղությամբ:

<sup>66</sup> Միլեր Բ., Տարեկան և այլ հայություններ, 1929, թ. 15.

<sup>67</sup> Մեղու Հայաստանի, 1871, հոկտեմբեր 16, № 38:

<sup>68</sup> ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 57, գ. 2, գ. 1905, թ. 7: